Պարույր Սևակ

Ութնյակներ

Մաս 5

41

Դուք հիշո՞ւմ եք.
Գործը միշտ էլ
Մեր ձեռքով էր
Գլուխ գալիս,
Բայց - թե ինչո՞ւ-
Նրան էին
Մեծարանքով
Գլուխ տալիս:

42

Ականջը սրած՝ ականջ է դնում,
Ականջի պոչով նա մեզ լրտեսում,
Հետո գնում է իր նման մեկի
Ականջը լցնում՝ ստեր փսփսում...
Նման մարդուկի ամենախոշոր
Բրդուշը պիտի ականջը թողնել,
Իսկ մենք հայրաբար - և հիմարաբա՛ր-
Այս հանցագործի ականջն ենք քաշում:

43

Հացը դարձրել է ձիավոր,
Ինքը դարձել է ոտավոր-
Ու չի հասնում նրա հետքից,
Բայց քաղցից էլ չի մահանում:
Նա ինքն իրեն և՛ դատավոր,
Ե՛վ իրենից զանգատավոր՝
Բողոքում է ինքն իրենից,
Ու վճիռը... չի կայանում...

44

Զարմանքդ զո՞ւր է:
Չէ՞ որ հին խոսք է.
Հացը մի թուր է,
Որ տափակ կողմով նույնպես կտրում է:
Եվ կամ, որ նույնն է.
Շունը որ շուն է՝
Ուտելիս նա՛ էլ
Ձայնը կտրում է:

45

Բա՞խտ է հարկավոր, ամեն տգետից
Ախար կաղրերի բաժվար դուրս չի գա:
Զգո՞ւյշ քսմըսվիր - շողոքորթվելը
Բոլոր պետերին, դժվա՞ր, դուր չի գա:
Ես հասկանում եմ քո շվարմունքը.
Ոսկե միջի՛նն էլ քեզ ձեռք չի տալիս-
Ոսկե միջինը մի սերմ է հաճախ,
Որ կանաչում է, բայց... բե՞րք չի տալիս:

46

Աչք մտնելու համար նա մի հատ է,
Բիբ փորելու համար՝ արդեն երկու:
Բայց գիտե՞ք, թե ինչն է,
Որ ամենից վատ է.
Մաթեմատիկական այս անհայտը
Հայտնի՛ քննադատ է,
Եվ ինչո՞վ է հայտնի-
Ինքն իրեն է հերքել + ինքն իրեն է հերքում...

47

Ինքը հոպոպն է հոտած,
Կարծում է՝ բույնն է հոտած:
Սևջուր առուն ճահճացել,
Կարծում է՝ հունն է հոտած:
Եվ հակառակն է լինում.
Ի՞նչ ես ուզում խեղճ թխսից՝
Առողջ ճտեր ո՞նց հանի,
Թե տակի ձուն է հոտած:

48

Ձյունը ի՞նչ է իմանում,
Թե աղքատը փայտ չունի.
Ճամփան ի՞նչ է իմանում,
Թե ձին ոտքին պայտ չունի:
Բայց ես գիտեմ. ով երեկ
Շեն տներ է ավիրել,
Ինչքան զոհման խոսք ասի՝
Մե՛կ է , խղճի խայթ չունի՛:

49

Ա՛խ, արդեն ականջ է ծակում
Այս անվերջ զնգոցն ու զանգը,-
Լավ երգը կրկնել տուր անվերջ՝
Կցնդի նախկին հուզանքը:
Թե ջուրը նույն ափն է ծեծում՝
Լճակ է և կամ ճահիճ է,-
Մաքո՛ւր ջուր, հոտա՛ծ ջուր չկա,
Գործում է միայն հոսա՛նքը:

50

Սարն ի՞նչ գիտե՝
Տուժն ինչ է,
Չշտապողը՝
Ուշն ինչ է:
Թե դատարկ է
Անցյալը դ,
Ի՞նչ իմանաս՝
Հուշն ինչ է: